ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

15 ապրիլի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը, Սերյոժա Սարդարյանը, Էմմա Գասպարյանը և Արմենուհի Ոսկանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սևակ Խաչատրյանը և Սասուն Մարանդյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 13 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.15-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 11-14-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

11. Փամբակ համայնքի Փամբակ գյուղի մոնցոնիտների հանքավայրում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

14. Փամբակ համայնքի ավագանու 21 մարտի 2024թ-ի թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 041-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի ապրիլի 15-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի I եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Տեղական ղեկավարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» քառամյա ծրագրի շրջանակներում ««Լոռվա ձոր» տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպության ստեղծմանը Փամբակ համայնքի մասնակցությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

9. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2024թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

11. Փամբակ համայնքի Փամբակ գյուղի մոնցոնիտների հանքավայրում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

14. Փամբակ համայնքի ավագանու 21 մարտի 2024թ-ի թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի ավագանու 21.03.2024թ-ի թիվ 17-Ն որոշմամբ Փամբակ համայնքում սահմանվել է տեղական վճարների գծով արտոնություններ: Հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարի գլխավոր քարտուղարի 26.03.2024թ-ի N /27.3/11580-2024 գրությամբ ներկայացված եզրակացությունը, անհրաժեշտ է որոշման մեջ կատարել եզրակացության մեջ նշված փոփոխությունները:

1. Նախագծի 5-րդ կետի համաձայն՝ Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Նկատի ունենալով, որ նախագծի 6-րդ կետով նախատեսվում է նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետի գործողության համար այլ ժամկետ՝ անհրաժեշտ է նախագծի 5-րդ կետում նախատեսել բացառություն նախագծի 6-րդ կետով նախատեսված կարգավորումների համար:

Միաժամանակ նախագծի 6-րդ կետի «մասի» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետի» բառով, իսկ «կետը» բառը «ենթակետը» բառով:

2. Նախագծի 2-րդ կետի «կիրառվում են» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «դրույքաչափի նվազեցման» բառերը, նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը:

3. Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետի և 2-րդ կետի 3-րդ ենթակետի «:» կետադրական նշանները անհրաժեշտ է փոխարինել «.» կետադրական նշաններով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 042-Ն/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի I եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, սոցիալական աշխատող Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը տեղեկացրեց, որ Փամբակ համայնքի բյուջեից 2024թ-ի I եռամսյակում համայնքի թվով 11 սոցիալապես անապահով ընտանիքի հատկացված սոցիալական աջակցության /դրամական օգնության/ չափը կազմում է 470 000 ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 043-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի մարտի 13-ից մինչև ապրիլի 05-ը տարբեր ծրագրերով և համայնքի բյուջեով ձեռք է բերվել 50,777,900 ՀՀ դրամի հիմնական միջոց:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 044-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին **հարցի նախագիծը:**

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում ձեռք բերված MA3 KO-449-41438121-540-001 մակնիշի աղբատար մեքենան և 50 հատ մետաղական աղբամաններ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 045-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին **հարցի նախագիծը:**

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ նախագծով ներկայացված 17 լոտ աճուրդի ներկայացված հողակտորներին ավելացվում է ևս 4-ը և առաջարկվում է տալ համաձայնություն 21 լոտ հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելուն: Իսկ ներկայացված 4 լոտ վարձակալությամբ հատկացվելիք հողակտորներին ավելացվում է ևս 4-ը և առաջարկվում է տալ համաձայնություն 8 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 046-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին **հարցի նախագիծը:**

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը, առաջարկում ենք հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Նախատեսված փոփոխությունների արդյունքում ՀՈԱԿ-ի բյուջեի ավելացում կամ պակասեցում չի նախատեսվում, հաստիքների թիվը մնում է նույնը՝ 42: Նախկինում նախատեսված 1 դրույք թափուր հավաքարարի հաստիքը

մնում է նույնը՝ 42: Նախկինում նախատեսված 1 դրույք թափուր հավաքարարի հաստիքը փոփոխվում է ավտոմեխանիկ՝ նույն դրույքչափով և նախկինում նախատեսված 1 դրույք թափուր զոդողի հաստիքը փոփոխվում է աղբատար մեքենայի բանվոր՝ նույն դրույքչափով

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 047-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Տեղական ղեկավարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» քառամյա ծրագրի շրջանակներում ««Լոռվա ձոր» տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպության ստեղծմանը Փամբակ համայնքի մասնակցությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ, Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում իրականացնում է «Տեղական ղեկավարների զորեղացում՝ հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» քառամյա ծրագիրը, որի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել Փամբակ համայնքի մասնակցությամբ ստեղծել ««Լոռվա ձոր» տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպություն: Առաջարկում եմ տալ համաձայնություն Փամբակ համայնքի մասնակցությամբ ««Լոռվա ձոր» տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպության ստեղծմանը, ինչպես նաև կազմակերպության հիմնադիր ժողովին մասնակցելու և Փամբակ համայնքը ներկայացնելու համար լիազորել Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրի վարչական ղեկավար Անուշ Սարգսյանին և Վահագնի բնակավայրի վարչական ղեկավար Սուրեն Վարդումյանին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 048-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2024թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտները նախատեսված 221.464.1 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 199.437.9 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 96.0 %: Նախորդ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ եկամուտները ավել են կատարվել 56.234.4 հազ. դրամով՝ աճը կազմել է 139.3%:

2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 18.489.9 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 27.805.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 150.4 %: 2023թ-ի համեմատությամբ եկամուտները ավել են գանձվել 549.0 հազ. դրամով՝ ապահովելով 102.0 % աճ: Ներկայացվում է սեփական եկամուտներ ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – առաջին եռամսյակի համար նախատեսված **50.0 հազ.** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 3.4%:
- Հողի հարկի ապառքի մասով – առաջին եռամսյակի համար նախատեսված **100.0 հազ.** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 392.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 392.7%:
- Անշարժ գույքի հարկի մասով – նախատեսված **4.001.9 հազ.** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 3.204.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 80.0%:
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – նախատեսված **5.786.9 հազ.** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 12.613.0հազ. դրամ, կատարողականը կազմելով 218.0%:
- Տեղական տուրքերի մասով – նախատեսված **2.155.0հազ.** դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 2.743.5 հազ. դրամ, կատարողականը կազմել է 127.3%:
- Այլ եկամուտների մասով – նախատեսված **25.358.9 հազ.** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 8. 850.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 34.9%:

Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 263.721.0 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել են 160.254.4 հազ. դրամով, կամ կատարողականը կազմել է 60.8%: Նախորդ՝ 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ծախսերը ավել են կատարվել 35.504.1 հազ. դրամով՝ աճը կազմել է 128.5%:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 049-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Փամբակ գյուղի մոնցոնիտների հանքավայրում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ նախնական համաձայնություն «Գրանիտ շեբեն» ՍՊԸ-ին, համայնքային սեփականության ՀՀ Լոռու մարզ Փամբակի մոնցոնիտ հանքավայրում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 050-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Ղարիբ Արտուշի Սուքիասյանի դիմումը, առաջարկում եմ տալ համաձայնություն Ղարիբ Արտուշի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0109-0005 կադաստրային ծածկագրով հողամասին կից գտնվող 06-023-0109-0007 կադաստրային ծածկագրով, 0,18195 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարքը նախապատվությամբ, ուղղակի վաճառքով Ղարիբ Արտուշի Սուքիասյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 36400 (երեսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 051-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է կապված աշխատակազմի ծանրաբեռնված լինելու հանգամանքը /մասնավորապես սոցիալական և քաղաքաշինության, հողաշինության ոլորտներում/ Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի համայնքային ծառայության բաժնի «Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)» կառուցվածքային ստորաբաժանման մեջ ավելացնել 1 դրույք սոցիալական աշխատողի հաստիք, որպես առաջատար մասնագետ, իսկ «Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժին» կառուցվածքային ստորաբաժանման մեջ ավելացնել 1 գլխավոր և 1 առաջատար մասնագետների հաստիքներ:

Առաջարկել Փամբակ համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին, իսկ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ կմտնեն Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 052-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 21 մարտի 2024թ-ի թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է Փամբակ համայնքի ավագանու 21 մարտի 2024թ-ի «Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները ևմրցույթի պայմանները հաստատելու մասին» ավագանու թիվ 019-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «06-059-0354-0001 կադաստրային ծածկագրից» բառակապակցությունը փոխարինել «06-059-0354-0011 կադաստրային ծածկագրով» բառակապակցությամբ:

2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «06-059-0350-0001 կադաստրային ծածկագրից» բառակապակցությունը փոխարինել «06-059-0350-0002 կադաստրային ծածկագրով» բառակապակցությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 053-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի մայիսի 16-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում */կցվում է որոշում N 054-Ա/:*
Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի մայիսի 16-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ _____ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ